ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1
ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 09 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով Արմեն Հարությունյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացի Արմեն Հարությունյանը 20.03.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանության շրջանակներում

ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի շրջանակներում իրեն ներկայացված թվով 5 մեղադրանքների մասով առկա են եղել քաղաքացիաիրավական հարաբերություններ, կնքված են եղել գույքի տարաժամկետ վճարման պայմանագրեր և ինքը ենթարկվել է քրեական պատասխանատվության զուտ այն բանի համար, որ չի կարողացել կատարել իր քաղաքացիաիրավական պարտավորությունները: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Դիմողը նշելով, որ իր գործում առկա չի եղել այնպիսի ապացույց, որը թույլ կտար եզրահանգելու, որ ինքը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի նկատմամբ ձեռք է բերել իրավունքներ՝ միաժամանակ պնդում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասն իրավակիրառական պրակտիկայում լայն մեկնաբանության հնարավորություն է տալիս այնքանով, որքանով իրավապահ մարմինները հնարավորություն են ստանում քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարող /ոչ չարամտորեն, այլ հանգամանքների զուգորդմամբ/ ցանկացած անձի մեղադրանք առաջադրել և դատապարտել: Ըստ դիմողի՝ <Վիճարկվող նորմի նման մեկնաբանումը խեղաթյուրում է քաղաքացիների ազատ կամարտահայտությամբ գործարքներ կնքելու, իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու և կատարելու այն ամենն ինչ արգելված չէ օրենքով>:

Սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը, ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում է, որ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ **ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի** իրավադրույթը չի կիրառվել դիմողի նկատմամբ: Դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումը՝ որպես անհատական դիմումին ներկայացվող անհրաժեշտ պայման, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ ձևակերպել է համապատասխան իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ նշված օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Հետևաբար, այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

2. **ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի առնչությամբ** դատական կազմը գտնում է, որ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմումին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի

7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Ա. Հարությունյանի դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանում առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը փաստող որևէ հիմնավորում:

3. Դիմողը չի հիմնավորել նաև, թե վիճարկվող իրավանորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Միաժամանակ, դատական կազմի կարծիքով, դիմողի համար առաջացած անբարենպաստ իրավական հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես սահմանադրաիրավական վեճ: Մասնավորապես, դիմողի ներկայացրած փաստարկներն առ այն, որ «...իրեն մեղսագրված արարքում նկարագրված գործողությունները իրենց բնույթով եղել են քաղաքացիաիրավական, նպատակ են հետապնդել իրավունք և պարտականություն առաջացնելուն, որևէ ապացույց գործում չի եղել, որը թույլ կտար եզրահանգելու, որը ինքը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի նկատմամբ իրավունքներ է ձեռք բերել...» կամ «...ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը կիրառելի է ցանկացած քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ, որտեղ պարտապան կողմը կխախտի իր պարտականությունների կատարումը», գործնականում ուղղված են ընդհանուր իրավասության դատարանների կողմից դիմողին վերագրվող արարքի իրավական գնահատականի իրավաչափությանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Արմեն Հարությունյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ

09 ապրիլի 2014թ.
ՍԴԴԿՈ/1-5